ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)

ք. Երևան « 06 » դեկտեմբերի 2023թ.

(կազմելու վայրը)

Երևան քաղաքի վարչություն

(ՀՀ ՎԿ կառուցվածքային ստորաբաժանում)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԵԱ-23 0094

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի **169.2-րդ հոդվածի 1-ին մասով** սահմանված է, որ **իրավաբանական անձանց**, օտարերկրյա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների **պաշտոնատար անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից պաշտոնական վիճակագրական հաշվետվությունները և պաշտոնական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելը** կամ **սահմանված կարգի խախտումով (սահմանված ժամկետների կամ ամբողջ ծավալի խախտումներով կամ աղավաղումներով) ներկայացնելը**՝ առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով: **Նույն հոդվածի 2-րդ մասի** համաձայն՝ **նույն խախտումների կատարումն այն անձի կողմից**, որը նշված խախտումների համար վարչական տույժի է ենթարկվել վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ **մեկ տարվա ընթացքում**՝ առաջացնում է **տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով**:

Արձանագրվել է, որ անհատ ձեռնարկատեր ՍԱԹԵՆԻԿ ՄԱՐՏԻՆԻ ՋԱՔԱՐՅԱՆԸ

(իրավախախտում կատարած անձի աշխատանքի վայրը, պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը,

ՆՈՐ ՆՈՐՔ, ԲԱՂՅԱՆ 1 ՆՐԲ., 4, 10, AT0245969 2019-08-05 005

հասցեն, անձնագրի/ նույնականացման քարտի տվյալները,

25397873

իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն)

սահմանված ժամկետում չի ներկայացրել 2023 թվականի հոկտեմբեր ամսվա «ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» Ձև 1-առևտուր (ամսական) վիճակագրական հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն):

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 05-Ն որոշման 1-ին կետով հաստատված **վիճակագրական տվյալների հավաքման կարգի** (այսուհետ՝ **Կարգ**) 33-րդ կետի համաձայն՝ վիճակագրական տվյալները ներկայացվում են **վիճակագրական փաստաթղթերում նշված ժամկետներում և պարբերականությամբ**: Կարգի 35-րդ կետի համաձայն՝ վիճակագրական տվյալների ներկայացման համար **սահմանված ժամկետի ավարտման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում** տվյալները չներկայացնելու դեպքում ռեսպոնդենտը ենթարկվում է պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

Հաշվետվության ձևը հաստատված է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 10-Ն որոշմամբ, որտեղ սահմանված է, որ սույն հաշվետվության ներկայացման ժամկետն է՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը:

Անհատ ձեռնարկատեր Սաթենիկ Զաքարյանի կողմից 2023թ.-ի հոկտեմբեր ամսվա Հաշվետվությունը չի ներկայացվել ոչ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը (*նոյեմբերի 10-ը*), ոչ **Կարգով** սահմանված վիճակագրական տվյալների ներկայացման համար *սահմանված ժամկետի ավարտման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում*:

Արարքը պարունակել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներ: Վարչական մարմնի կողմից հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ **վարչական պատասխանատվության ենթարկվող անձը իրավունք ունի** ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից, ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանի ծառայություններից, եթե չի տիրապետում այն լեզվին, որով տարվում է վարույթը, գանգատարկելու գործով որոշումը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս** վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին օրենքով սահմանված կարգով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Նույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է** վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Արձանագրությունը կազմեց՝ Վարչական իրավախախ. և հաշվետվ. մոնիթորինգի բաժնի ավագ մասնագետ

(արձանագրությունը կազմողի պաշտոնը,

Իննա Գագիկի Սարգսյան

անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը)